ղի ունեցաւ ։ Ցերեկը բոլոր Հիւպատոսք և երեւելի անձինք պաշտօնական այցելութեան գացին Վսեմ Կառավարչին․ գիշերն ալ նորին վսեմութիւնը պարահանդէս մի տուաւ նոցա․ Նոյն միջոցին պալատին շուրջը կանթեղներով զարդարուած էր և զօրաց նուագարանաց ձայնը քաղքը ներդաշնակութեամբ կը հնչէր ։

— Բռուսիոյ Ֆրէտէրիք Թագաժառանգ իշխանը, Ս. Երուսաղէմ այցելութիւն ըրած ատեն եղած հանդէսները մշտնջենական յիշատակ ըլլալու համար, յատուկ ընտիր պատկերհան մի ղրկած է քաղաքս, որպէսզի իւր Բարձրութեան այստեղ գտնուած միջոցին տեղի ունեցած փառաւոր և շքեղ հանդէսները, և արքայական տեղերը թէ քաղաքիս մէջ և թէ շրջակայքը զբօսնուածները նկարէ, պաշտօնեաներով հանդերձ ։

Վերոգրեալ պատկերհանին հետ նորին բարձրութիւնը հաճեցաւ իւր շքեղ արժէաւոր կենդանագիրը նուիրել Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր. նկարը զգեցած է պատերազմական համազգեստ և բարձր իշխանական դիրքով մի կանգնած իւր յաղթ սուրը ձեռքը բռնած և թագը իւր քովը գտնուած սեղանի վերայ դրուած է. և աւելի մեծ արժէք կընծայէ պատկերին իւր ձեռագիր ստորագրութիւնը. այս պատկերը խրկելու խոստումը Նորին բարձրութիւնը Երուսաղէմ այցելութիւն ըրած ատեն տուած էր Ս. Պատրիարքին. այն օրը՝ երբ երեկոյ մի սեղանի հրաւիրած էր զՍ. Պատրիարքը։ Նորին բարձրութեան այս մեծ եւ փառաւոր նուէրը ուրախութեամբ և խորին շնորհակալութեամբ ընդունեց Ս. Պատրիարք Հայրն մեր և բոլոր միաբանական ուխտս ։

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
## ԼԷՆԿ ԹԻՄՈՒՐԱՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՏԱՃԻԿ ԲՆԱԳՐԷ

ՅԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒ

ՅԱՒԵԼԵԱԼ ԽԱՆՕԹՈՒԹԻՒՆՍ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ․

ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԷ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1873. Ուր կը պատմուի Թիմուրայ ծնունդն և առաջին ծագումն, բովանդակ արշաւանքն և պատերազմն յայլ և այլ կողմանս աշխարհի. ազգաց եւ ազանց կոտորումն. քաղաքաց և գաւառաց կործանումն. թագաւորաց և իշխանաց բնաջինջ բարձումն. Հայաստանի և Վրաստանի աւերածը, և անտի բազմութեամբ գերեաց, լցեալ աւարօք եւ մեծագանձ ճոխութեամբ գնալն ՚ի Սըմըրղանտ, և այլ արարմունքն և մահը ։

Յաւելեալ պատմութեանս համառօտ ծանուցմամբ կը յիշատակուին յաջորդք, որդիք, և թոռունք Թիմուրայ, մինչեւ ՚ի բարձումն թագաւորութեան ՚ի Թիմուրեան ցեղէ Ճօզպէկ Թաթարաց ։

Կը ծախուի թէ՛ սոյն Աթոռոյս գրատան թէ՛ Կ. Պօլսոյ Երուսաղէմատան մէջ և թէ բոլոր ազգային գրածախներու քով ։ Գին թղթակազմին երկու հինգնոց. իսկ կիսակազմին 12 դահեկան ։

digitised by A.R.A.R.@